

**«Լիազոր մարմնի և ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված անձի միջև կնքվող նախնական պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

Նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

\_\_\_\_\_2017թ.№ \_\_\_\_\_Ն

**ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԻ ՄԻՋԵ ԿՆԵՎՈՂ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 14.2-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել լիազոր մարմնի և ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված անձի միջև կնքվող նախնական պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Հավելված

ՀՀ կառավարության 2017 թվականի

\_\_\_\_\_ -ի N \_\_\_\_ - Ն որոշման

**Ն Ա Խ Ն Ա Կ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ո**

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ  
ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՁԻ ՄԻՋԵՎ ԿՆՔ-  
ՎՈՂ

**(օրինակելի ձև)**

քաղ. Երևան

\_\_\_\_\_ 20 թ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 46-րդ կետով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և 20.2 հոդվածի 5-րդ մասով Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը՝ ի դեմս նախարար \_\_\_\_\_-ի, ով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, իր լիազորությունների սահմաններում (այսուհետ՝ լիազոր մարմին) մի կողմից, և \_\_\_\_\_ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն), ի դեմս \_\_\_\_\_, ով գործում է \_\_\_\_\_ հիման վրա, մյուս կողմից, հաշվի առնելով, որ ընկերությունը հաղթող է ճանաչվել ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված 20\_\_ թվականի \_\_\_\_\_-ի \_\_-ին հայտարարված մրցույթում, կնքեցին սույն նախնական պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան է**

Ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար ներկայացվող դիմումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը և երկրաբանական ուսումնասիրության նյութերը փորձաքննության ներկայացնելու ժամկետների սահմանումը:

**2. Կողմերը սահմանում են հետևյալ ժամկետները՝**

- 1) ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար ներկայացվող դիմումի համար՝ \_\_30\_\_ օրացուցային օր.
- 2) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի համար՝ \_\_30\_\_ օրացուցային օր.
- 3) երկրաբանական ուսումնասիրության նյութերը փորձաքննության ներկայացնելու համար՝ \_\_60\_\_ օրացուցային օր:

### **3. Ծանուցում**

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծանուցումները, հաղորդումների կատարումը համարվում է պատշաճ, եթե կատարված է գրավոր և տրված է առձեռն, կամ ուղարկված է պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով կամ կատարված է փոխանցում ֆաքսի միջոցով կողմի ստորև նշված հասցեով կամ այդ նպատակով կողմի նշած մեկ այլ հասցեով, ընդ որում յուրաքանչյուր դեպքում պետք է առկա լինի գրավոր ստացական, որը կարող է փոխանցվել էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով:

### **4. Անհաղթահարելի ուժի, ինչպես նաև կողմերի գործունեության հետ չկապված դեպքեր**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլ դեպքեր, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

### **5. Վեճերի լուծումը**

Պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

### **6. Այլ դրույթներ**

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու օրվանից և գործում է մինչև Պայմանագրի 2-րդ կետով սահմանված ժամկետների ավարտը:

6.2 Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### **7. Կողմերի վավերապայմանները**

Լիազոր մարմին \_\_\_\_\_

(գտնվելու վայրը)

---

(հեռախոսահամարները, կապի այլ միջոցները, հաշվարկային հաշիվ)

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ \_\_\_\_\_

(գտնվելու վայրը, հարկային կոդը)

---

(հեռախոսահամարները, կապի այլ միջոցները, հաշվարկային հաշիվ)

**ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻ ԱՆՈՒՆԻՑ**

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը,  
պաշտոնը)

\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը, պաշտոնը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Կ.Տ. \_\_\_\_\_

Կ.Տ. \_\_\_\_\_

(այն դեպքում, երբ ընկերությունը կնիք  
չունի, այդ մասին հայտարարվում է՝  
ձեռագրով նշելով «Ընկերությունը կնիք  
չունի», և ստորագրվում Պայմանագիրը  
ստորագրողի կողմից)